# 65. ՆԱՌ ԽԱԹՅՈՒՆ

## «ԱՍՏԾՈՒ ՊԱԽԱԾ ԳՅԱՌԸ ԳԵՅԼ ՉՈՒՏԵ»

Կէլնի, կէլնի մեյ կնիկ: Էսա կնիկ մի օր որ տախտ կավլի, տախտի մեջ կկնդնի մեյ խատ նռան խատ: Նռան խատ կթալի պերան, կուլի: Ինն ամիս, ինն սհաթ, ինն օր կթըմըմի, էսա կնիկ կպիրի մեյ խատ խուրն-խրեղեն, սիրուն ախչիկ, ինոր անունը կդնի Նառ խաթյուն:

Նառ խաթյունի մեր օրմ՝ որ ուրենց պայ կէլնի, կիրիշկի դեխ լյուսնակ. կասի. - Լյուսնակ, տյու՞ ես խորոտ, թե ես:

Լյուսնակ կասի ինոր. - Ո՛չ ես եմ խորոտ, ո՛չ տյու. Նառ խաթյունը քյանծ ծիկ էլ, քյանծ քեյ էլ շատ խորոտ:

Տուն կմտնի, կմտմտա, թե ինչխ անի որ Նառ խաթյունը կուրսնցվի, որ իյնքն էլնի խորոտ:

Կկանչի ուրենց մշակուն, կասի. - Տար Նսա ախչիկը յոթ սարի իտև մորթի, շապիկ թաթխի արնի մեջ, ինոր մսիցն էլ կտրի մի կտոր, պե ծիկ, որ տիսնամ, անեմ քյաբաբ, ուտեմ, իմ սիրտ խովնա, որ ես էլնեմ խորոտ:

Մշակը կառնի էտա պստիկ տղեն* , կինի ճամբախ: Ճամխին երկու ավ ատող մարդեր ինոր ռաստ կուկյան, կխարցուցեն. - Դյո՞ր կտանես էտա տղին:

Էն էլ կասի. - Ձեզնից պախեմ, աստծուց ի՞նչ պախեմ. էսա տղեն պիտի տանեմ մորթեմ, ուր շապիկ թաթխեմ մեջ արնին, տանեմ ուր մոր. ամա ծեռս չէրթա, որ ինոր մեղաց տայ մտնեմ:

Էն պարի ավչիյք չեն թողնե որ սպանի. - Առ քեյ էսա ոչխար, - կասեն, - տար մորթի, ինոր շապիկ թաթխի իտոր արնի մեջ, մի կտոր էլ ոչխարի մսից տա՛ր տու՛ր ինոր մոր:

Մշակը կլսի իտոնց խաբրին, կառնի ոչխար, կտանի սարի իտև իյնքն ուր ուզածովն կանի, կառնի կէրթա:

Ավ արողները ախչիկ որ մորթվելուց կազատեն, կանեն ուրենց քյոր,

---

* Վասպուրականում առհասարակ փոքր երեխաներին. աղջիկ լինի. թե տղա, տղա են անվանում, որոշվում է միայն լաճ, որն տղա ասել է (Ծ.Բ.):

կփանեն, կդնեն մեյ հէրիմ մեջ, ճյոչ ճախցիմ քյար էլ կթալեն դռան իփև, կէրթան:

Օրմեջ կուկյան ինոր փես, խայց կպիրեն, ճյուր կպիրեն:

Ըսփյուս դեն Նառ խաթյունի մերը ուրենց պայ կէլնի, էլմ էլ լյուսնկին կասի էն առճի խաբրներ. - Լյուսնա՛կ, փյու՞ ես խորոփ, թե ես:

Լյուսնակ կասի. - Ոչ փյու ես խորոփ, ոչ ես, Նառ խաթյուն քանծ մե հըմենս էլ ի խորոփ:

Մերը կասի. - Ի՞նչ Նառ խաթյուն, չէ՞ որ ինոր մորթել փվեր եմ, ինոր միսն էլ արեր քյաբաբ, կերեր եմ:

- Թու, Նառ խաթյունին էրկու ախպերներ առեր իրենց քյոր են արե, դրեր են ամուր հէրիմ, ճյոչ ճախցի քյարմ էլ թալեր են իփև, կնացեր են ուրենց պանին:

Մերը էսա խաբրներ որ կլսի, կասի. «Ի՞նչխ անեմ, որ էսա ախչիկ կուրիսցուցեմ, ես էլնեմ խորոփ»: Կէլնի օծու գլըխ կճնճխի, կխառնի խեփ ծամոնին, կառնի կէրթա հէրի փռան մոփ, մեկ ծենով կկանչի՝ ծամոն կծախեմ, ծամո՛ն:

Անչայնք կկանչի չյում ախչիկ ինոր ծեն կլսի, կուզի առնել, ամա փռնից փեղ չկա որ փյուս կյա, առնի: Մոր կասի. - Կանա՞ս մի ճեխք կնդնես, էն փեղից փաս:

Մերը կկնդնի ծակմ՛, ՝էնփեղից ախչկան ծամոն կուփա, ինքն էլ ափալ-թափալ, վռազնալով կփախնի կէրթա:

Ախչիկ որ ծամոն կդնի պերան, փեղսփեղ կիյնի գեյփին կմեռնի: Մարդ-մափաթ չէլնե էնփեղ չյում իրիկուն:

Իրիկուն ախպերներ որ ավից կուկյան, ներս որ կմփնեն, կփիսնան ի՞նչ. ուրենց քյոր մեյ բոյովն փռվե մեջ եէրին, փեղնցե, էլե մի պփուղ խունկ:

Շափ կուլան, շափ կմռմռան, վոժ չի կփրե: Մեկել կփիսնան որ, էնդեխեն թագավուրու լաճ մեջ էրկիյնք մեջ գեյփինք կուկյա դողրի ինոնց մոփ: Կխառոցուցի, եղելութեն կիմանա, ինոնց սիրփ կուփա: Կասի, որ ծեր քյոր ժըրըըցուցի, կուփա՞յք ծի խամար:

Ինոնյք էլ շափ ուրախ կէլնեն, կասեն. - Ախփ-շարթ էլնի, համա փյու ժըրըըցու՛, մեր քյոր թող քեյ էլնի:

Թագավուրու լաճ համան էփափեղ, անմախական շարբաթն շուշով ուր ծոցից կխանի, կլցի ախչկա պերան: Ախչիկ վեր կթռնի, կժրի, կէլնի խուրն-խրեղեն, մորե մեկ, էլմ էն Նառ խաթյուն.

Ախպերներ էլ պան չեն ասե, ուրենց սրփով քյորը կուփան թագավուրու լաճուն. էն էլ կթալի ուր ծիու թարք, կփանի ուր փուն, յոթ ցերեկ յոթ գիշեր խարսնիս կանի, կպսակվի ինոր վերեն:

Շափ կմնա թե քիչ, ասփված գիյփի, Նառ խաթյունը մեյ խափ ուր պես, սիրուն լաճ փղա կպիրի:

Նառ խաթյունի մեր ուր փան շափ ուրախցեր էր, որ ախչիկ մեռեր

ի: Էլմ էլ կէլնի ուր պայ, կիրիշկի լյուսնկին, կասի. - Լյուսնակ, ե՞ս եմ խորոտ, թե փյու:

Լյուսնակ կասի. - Ոչ ես եմ խորոտ, ոչ փյու, Նառ խաթյուն քյասնցյ հըմենս էլ խորոտ:

- Ի՞նչ Նառ խաթյուն, ախր ես ինոր մեռույի:

- Ծու՛, աղեյ մեռույիր, թագավուրու լաճը ինոր ժըրըյուց, արեց ուր կնիկ, գյո դրեր ի, քյոշկ-սարի մեջ, որ արև, արեգակ վերեն չառնե, օծն ուր պոռտով էնպեղ չի կանա մտնե:

Նառ խաթյունի մերը, էսա խաբրներ որ կլսի, կէլնի կէրթա դոդրի դեխ թագավուրու սարեն, կնստի էն ճամխի վերեն, որ փեղից թագավուրու լաճ կուկյա կնցնի ծիով: Ինոր ծիու առճև կէլնի, կուլա, կաղաճի. - Կտրի՛ճ, կտրի՛ճ քյո արևու սաղաղեն էլնի, ծիկ թա՛լ քյո ծիու թարք, տա՛ր քյո տուն, քյո փղին օրորս ասեմ:

Թագավուրու լաճ իսոր վերեն խղճալով, կթալի ուր ծիու թարք, կտանի ուր տուն:

Նառ խաթյուն փենջարից որ կիրիշկա, կտեսնա ուր իրկան արած, մեյ ծենով կկանչի. - Էտա կնիկ մի՛ պիրե մեր տուն, մի՛ պիրե:

Թագավուրու լաճ կասի. - Պան չկա, խեղճ ի, թող գիշերմ՝ մնա մեր տրուան իտև, առավոտնը էլնի էրթա ուր պանին:

Նառ խաթյուն էլ ծեն կկտրի, էլ պանմ՝ չասե:

Էսա թագավուրու լաճուն մեյ պնոթք կեր, հըմեն առավոտուն չյում ուր փղեն ուրուրոցից չխաներ, չուզեր, չպազեյր, չէր էրթա ավի:

Էն առավոտուն էլ որ կուզեր ուր փղան տիսնալ, տեսավ ի՞նչ, փղի վիզը մեջ ուրուրոցին կտրեր են: Հայ հավա՛ր, հայ մադա՛թ, էսա դեխ, էնա դեխ խաբց-փործ կտնեն, մարդ սալըխ՛ տվող չկա. վո՞վ ի կտրե, վո՞վ չի կտրե, մարդ չիմանա:

Մ՞ասե, որ պառավը էտա գիշեր գյաղտիկ կնացե կտրե. տանակն էլ թալեր ի ինոր մոր ջեռք, իկե կասի. «Վիր ջեռքից որ արնոտ տանակ կյուս էկավ, էն ի կտրե թագավուրու փղի վիզը»:

Իսոր-ինոր ջեռք կիրիշկեն, աղորթ որ տանակ փղի մոր ջեռքից կխանեն. մարդ խաբար չուներ:

Թագավուրու լաճ էսա պան որ կտիսնա, ամր կանի, ոտ կնկայն աչքեր պորեն թալեն ջեռք, փղենը տան կիյրկ, տանեն թալեն մեջ կամշե գյոլին, թող էն տեղ մնա, չյում օրն մախուն:

Գյապրել խրիշտակ կիջնի էնտեղ, կասի Նառ խաթունին. - Ձեռ տու՛ քյո ջեռք. քյո աչքեր խա՛ն, դի՛ր ուր տեղ, կծրես. քյո փղի գլոյխն էլ դի՛ր վգի մոտ, էն էլ կսաղանա:

Նառ խաթյունը իսոր ասածի պես կանի, էրկուսն էլ՝ մերն էլ, փղեն էլ կսաղանան, կէլնեն մորե մեկ, խուրն-խրեղեն:

Խրիշտակ կասի. - Դե՛ ուզի, քյո ուզածն ի՞նչ ի:

Կասի. - Կուզեմ երկթե պեռթ, դամյուրե դոռն վերեն, աղվեսը տանդկին, առծիվ էրտսկալ, գեյլը տոնապան, առջը պախապան էն պեռթին:

Կասի. - Դե՛ աչքերդ խփի՛, պա՛ց. ասփված քեյ կուփա:

Աղորթ որ, ինչխ որ ուզեց՝ ըսկուն էլ էլավ: Ինքը փեսավ մեջ էրկթե պեռթին, դամյուրե դուռն վերեն, աղվեսն՝ փանդկին, գեյլը՝ դռնապան, առծիվը՝ էրփսկալ, առջը՝ պախապան էն պեռթին:

Շափ կմնա, քիչ կմնա, մի օր թագավուրու լաճը էն փեղրանք ավի կէրթա: Ինքը ուր մարդերով զափամանց կփեսնան որ մեյ փեղիցմ պյոց ու կրակ կպանցրանա: Մշակները կասեն. - Աղա, էն փեղը կա չկա մարդ կա, ափամորդի կա:

- Որ ըսկունի, - կասի թագավուրու լաճ, - ա՛ռ էսա մեյ ոչխարը, փա՛ր էնփեղ կարմրցրու պե, ուփենք, քեֆ անենյք:

Ուր մարդերանց մեկը կառնի ոչխար կփանի էնփեղ: Գեյլը որ կփեսնա իսոր, շոփ կէրթա խաթյունին կասի. - Խաթյուն, խաթյուն, մեյ ծիավոր մեջ էրկիյնք, մեջ գեյփինք դողրի կուկյա դեխ մեյ, ի՞նչ կասես ինոր խամար, թողնե՞յնք, թե չթողնեյնք:

Նաո խաթյունը կասի. - Պան մի՛ ասեյք, թող կյա:

Մշակը ուր խեփի ոչխար կփանի ինոնց թոներ կկախի որ խորովի. ամա ուր աչքը խաթյունի իրիսից չկփրե: Էնկանդար կիրիշկա, կիրիշկա, չյում ոչխարը մեջ թորվան կիրիցի, կմնծրի, էլ չիմանա, չյում Նաո խաթյունը կասի ինոր. - Տղա, ինչ շափ ծի կուրունես, քյո խուրուղուն չորցավ թոներ, մկա քյո ա՛ղեն խե քե կռիվ կանի, ա՛ռ, փա՛ր քյանի շոփ ի:

Նաո խաթյուն իր մարիֆաթով դասփեմ էլ խաց կուփա խեփ ինոր կճամխի:

Էն մարդը որ խուրուղուն կևառնի կփանի, թագավուրու լաճ կկռվի խեփ ինոր, թե ինչի էսականդևսր վախփ մնայեր էր էն փեղ, խուրուղուն էլ չորցրեր էր:

- Թևագևսվոր ապրած կենա, քեյզնից ըպախեմ, ասփծուց ի՞նչ պախեմ, կնայի էն փեղ իմ խաթյուն փեսա, էլ աչքս չկփրավ ինոր իրես իրիշկելուց. ինոր խամար էլ խուրուղունը ըըըկնա իրիցավ:

Մարդը պափմեց թագավուրու լաճուն Նաո խաթյունի փուն փեղ, և էն գյազաններ, որ ինոր պախապևսն ին կայնե:

Թագավուրու լաճ որ էսա պաներ լսավ ուր խզմաքյարից, իրաման կանի, էլնել էրթալ էն փեղ: Կասի. - Տեսնայնք սու՞փ ի քյո ասածը, թե աղորթ ի:

Կէլնեն ուրենց թար-թախմով կէրթան:

Գեյլ որ զափամանց կփեսնա, կվազի մոփ խաթյուն, կասի. - Խևսթյու՜ն, խաթյու՜ն, եռընգվևսն մարդն էկավ. էսա դրյուս ուր խեփ կա շափ ծիավորներ էլ:

Կասի. - Պան մի ասեյք, կուկյան, թող կյան:

Թագավուրու լաճ կուկյա կխասնի պեռթի փռան վերեն, ծիուց փայ կիջնեն, դողրի կէրթան մոփ Նաո խաթյուն, ինոր խեփ խարց ու պարև կէլնեն:

Նառ խաթյունն էլ ինոր իքրամ, ազաթ, պապիվ չմնա որ չանէ, կուպեն կխմեն կանեն ուրախութեն:

Նառ խաթյունի մեր հալա չի մոռցե ուր չարութեն. էլմ էլ կէլնի պակ. կխառցուցի լյուսնկին. - Լյուսնա՛կ, փյու՞ ես խորոտ, թե ես:

Լյուսնակն էլ կասի. - Ո՛չ ես եմ խորոտ. ո՛չ փյու, Նառ խաթյուն քյանձ հըմենս էլ խորոտ:

Պառավ որ կլսի էսա խաբրներ, կշվարի, մազեր վեր ուր գլխուն կդիզանան, կասի լյուսնկին. - Էլ ի՞նչ Նառ խաթյուն, ախր ես ինոր կուրիսցուցի, ինոր փարան թալին մեջ կամշե գյոլին, մկա մեռեր ի:

- Թու՜, շիվար, Նառ խաթյունը գյո մեջ էրկթե պեռթին ուր փղի խեպ. դամյուրե դուռն վերեն, աղվեսը՝ փանպկին, առծիվը՝ էրդսկալ, գեյլն՝ դըռնապան, առջը՝ պախապան են ինոր. թագավուրու լաճը ուր մարդերով ինոր կշփին կասեն, կուպեն, կխմեն, կուրախնան ուրենց քեֆի խեպ:

Մերը որ կլսի, կէլնի վռազ-վռազ կինի ճամբախ, կէրթա դեխ ինոյնք. կուզի էնպեղ էլ մի պան անի: Գեյլ որ կպիսնա ինոր, կէրթա ներս. Նառ խաթյունին իմաց կուպա, որ մեյ կնիկ Ալ կուկյա իրենց պուն, թողնի՞ ներս մպնի. թե չէ:

Նառ խաթյունը ինոր էլ պան չասե:

Պառավը կէրթա ներս, կնսպի ինոնց խեպ սեղնի վերեն: Պսպի պղենը կխնդրվի մորից, որ ուր խամսւր մերը խեքյաթ ասի: Մերն էլ ինոր խաթրին կասի:

Փլավի վերեն Նառ խաթյունը ուր գլխուն գյացածը հըմենը կպապմի չյում կուկյա կխասնի վերջ. էնպեղ, որ ինոր թալեր ին մեջ կամշե պյոլին, ասպծու խրիշպակը ինոնց պիրե, թալե մեջ պեռթին:

Զարմայք կպռնի թագավուրու լաճուն, էլ չի կանա խամբիրե, թուր կքյաշի որ պառվուն կպոր-կպոր անի, ամա Նառ խաթյուն չթողնե:

Կկանչի գեյլվուն, առջուն, կասի. - Էսա պառավ փվեր եմ ձե, ինչխ կիպեյք, ըսկուն արեք:

Ինոյնք Ալ հըմեն մեյ պեղ. գեյլ, առջ, աղվես և առծիվ կփռթնեն պառվու վերեն ինոր կգյզգյզեն. ճյուչ պրպյուճը ականջ կթողնեն:

Ըսպյուց դեն թագավուրու լաճ կիյնի ուր կնկայն վզով. մեղա կասի, կառնի ուր խեպ կպիրի ուր սարեն: Նոր թազաղան կելնեն խարս ու փեսա, կխասնեն ուրենց սրպի մուրազին:

Ասպծուց իրեյք խնձոր իճավ, մեկը ասողաց, մեկը լսողաց, մեկը ականջ արողաց: